ISSN 1829-1074



# ՄԱՆԿԱԲԱՐՁՈՒԹՅՈՒՆ, ԳԻՆԵԿՈԼՈԳԻԱ ԵՎ ՆԵՈՆԱՏԱԼՈԳԻԱ

գիտագործնական հանդես

Vol.9, No.1



2015

**Акушерство, гинекология и неонатология**
научно-практический журнал

**Главный редактор**
Размик Аршалуйсович Абрамян

**Редакционный совет**
Вилен П. Акопян, Карен Р. Бабаян, Ара С. Баблоян, Гагик А. Бегларян, Бернар Блан, Александр С. Гаспарян, Александр И. Гус, Владимир Н. Демидов, Гагик А. Джилавян, Дереник Г. Думанян, Татьяна К. Знаменская, Арутюн М. Кушкян, Александр Д. Макацария, Армен Р. Меликян, Ара М. Минасян, Михаил З. Нариманян, Георгий Г. Окоев, Джан Карло Ди Ренцо, Тамара Ф. Саргсян, Арчил Г. Хомасуридзе, Нелли Г. Хостикян

**Ответственный секретарь**
Гоар Г. Джрбашян

**Технический редактор**
Армен К. Блбулян

Основатели:
“Республиканский институт репродуктивного здоровья, перинатологии, акушерства и гинекологии” ОАО и
“Ассоциация акушеров-гинекологов и неонатологов” ОО
Издатель: “Институт перинатологии, акушерства и гинекологии” ОАО,
сертификат регистрации: 01 А No. 004011
Адрес: г. Ереван, ул. Маргаряна 6/2
Тел: 34-18-83, 39-89-39
Сдано в набор: 22.06.15
Подписано к печати: 30.06.15
Тираж: 100 экз., объем: 32 страниц
Ответственный за номер: Р.А.Абрамян
Дизайн издательства “Автограф”
Напечатано в типографии “Вард Грат”

Ссылки на журнал обязательны.

Материалы, опубликованные в журнале, могут не отражать взгляды Редакционного совета.

Vol. 9, No. 1, 2015

**Obstetrics, Gynecology, and Neonatology**
Scientific-Practical Journal

**Editor-in-Chief**
Razmik Arshaluys Abrahamyan

**Editorial Board**
Karen R. Babayan, Ara S. Babloyan, Bernar Blan, Gagik A. Beglaryan, Vladimir N. Demidov, Derenik H. Dumanyan, Alexander S. Gasparyan, Alexander I. Gus, Archil G. Khomasuridze, Nelly G. Khostikyan, Harutyun M. Kushkyan, Gagik A. Jilavyan, Vilen P. Hakobyan, Alexander D. Makatsaria, Armen R. Melikyan, Ara M. Minasyan, Michael Z. Narimanyan, Georgi G. Okoev, Gian Carlo Di Renzo, Tamara F. Sargsyan, Tatiana K. Znamenskaya

**Managing Editor**
Gohar G. Jerbashian

**Executive Editor**
Armen K. Blbulyan

Founders:
“Republican Institute of Reproductive Health, Perinatology, Obstetrics and Gynecology” OJSC and
“Association of Obstetrics-Gynecologists and Neonatologysts”
Publisher: “Institute of Perinatology, Obstetrics and Gynecology” OJSC,
Registration Certificate: 01 A No. 004011
Address: 6/2 Margaryan st., Yerevan
Tel: 34-18-83, 39-89-39
Submitted for printing: 22.06.15
Signed for publishing: 30.06.15
Number of copies: 100, volume: 32 pages
Responsible for the issue: R.A.Abrahamyan
Designed by Autograph Publishing House
Printed by Vard Hrat Printing House

References to the journal are mandatory.

The materials published in the journal might not reflect the Editorial Boars’s viewpoints.

# Ի գիտություն հեղինակներին

Տպագրության համար նախատեսված հոդվածները գրելիս «Մանկաբարձություն և գինեկոլոգիա, նեոնատալոգիա» ամսագրի խմբագրությունը խնդրում է պահպանել հետևյալ կանոնները.

1. Հոդվածի առաջին էջի վրա պետք է լինի հաստատության ղեկավարի նշագիրը (ստորագրությունը) և կնիքը: Հոդվածները կարող են գրված լինել հայերեն, ռուսերեն, անգլերեն և այլ լեզուներով: Տեքստը (2 օրինակ) պետք է լինի 11 չափի «Arial Armenian» տառատեսակով (ռուսերեն և անգլերեն հոդվածները` «Russian Times New Roman» տառատեսակով), տողերի միջև տարածությունը 1,5, լուսանցքները լինեն 2,54 սմ: Հոդվածները խմբագրությանը պետք է տրամադրվեն նաև էլեկտրոնային տարբերակով:

1.1. Սկզբում գրվում են հեղինակի անվան և հայրանվան սկզբնատառերը և ազգանունը, ապա հոդվածի անվանումը: Նոր տողից նշվում է հաստատության ամբողջական անվանումը, որտեղ կատարվել է աշխատանքը: Հոդվածի վերջում նշվում է հեղինակի ազգանունը, անունը և հայրանունը (ամբողջությամբ), նրա հասցեն` փոստային ինդեքսով, հեռախոսահամարը, դրվում ստորագրություն (բնօրինակ): Համատեղ գրված հոդվածը պետք է ստորագրված լինի բոլոր համահեղինակների կողմից: Սրանով երաշխավորում է հոդվածի բնօրինակ լինելը, հավաստիացվում է, որ այն նախկինում չի հրատարակվել ու այլ խմբագրություններ չի ուղարկվել տպագրության համար:

1.2. Բնագիր հոդվածները պետք է ունենան հետևյալ բաժիններն ու ենթավերնագրերը`
- «Ներածությունը» պետք է հիմնավորի ուսումնասիրվող խնդրի արդիականությունը:
- «Ուսումնասիրության նյութն ու մեթոդաբանությունը» խորագրի տակ պետք է ներկայացվեն ուսումնասիրվող նյութի ընտրության սկզբունքները և բնութագիրը, հետազոտության ընթացքում կիրառված մեթոդները, ներառյալ` վիճակագրական:
- «Հետազոտության արդյունքները» բաժնում ներկայացվում են ստացված գիտական արդյունքները, նշելով վստահության միջակայքը, եթե հնարավոր է:
- «Քննարկում» բաժնում պետք է սեփական տվյալները համեմատության մեջ դրվեն հայրենական և արտասահմանյան գրականության մեջ առկա նմանատիպ տվյալների հետ:
- «Եզրակացություն» բաժինը պետք է անդրադառնա միայն այն եզրահանգումներին ու ընդհանրացումներին, որոնք ուղղակիորեն հետևում են հետազոտության արդյունքներից:

1.3. Հրատարակության շրջանակներում հարկավոր է օգտագործել արդի գիտական տերմինաբանությունը: Բառերի և անվանումների կրճատումը բացի համընդհանուր ընդունված հապավումներից և չափի միավորներից, թույլատրվում է միայն ամբողջական անվանման սկզբնական նշման և դրան անմիջապես հաջորդող փակագծում հապավումը տալու դեպքում:

2. «Գրականության ցանկը» պետք է ընդգրկի հայրենական և արտասահմանյան հեղինակների վերջին 7-10 տարվա աշխատությունները: Անհրաժեշտության դեպքում թույլատրվում են հղումներ ավելի վաղ շրջանի առանձին աշխատություններին: Ցանկալի է, որ գրականության ցանկը չգերազանցի 15-20-ը:

2.1. Գրականության ցանկը կազմվում է այբբենական կարգով: Սկզբում նշվում են հայերեն, այնուհետև ռուսերեն, անգլերեն և այլ լեզուներով հրատարակված հղված գրականությունը: Հղումները պետք է համարակալված լինեն, ձեռագրի տեքստում դրանք պետք է վերցնել քառակուսի փակագծերում` գրականության ցանկի համարակալման համաձայն:

2.2. «Գրականության ցանկում» ամսագրերի հոդվածները նկարագրելիս` նշվում է հեղինակի ազգանունը, անվան և հայրանվան սկզբնատառերը, հոդվածի վերնագիրը, ամսագրի անվանումը, թվականը, հատորը, համարը, էջերը, գիրք նկարագրելիս` հեղինակի անունը և ազգանունը, գրքի անվանումը, հրատարակչության անվանումը, վայրը և թվականը: Չորսից ավելի համահեղինակներ ունեցող հոդվածի/գրքի դեպքում նշվում է առաջին հեղինակի անվանատառերն ու ազգանունը, որին պետք է հետևի «և մյուսները» նշումը:

3. Աղյուսակները պետք է ներկայացնեն միայն նյութին վերաբերող, ընդհանրացված, վիճակագրական տեսակետից ամփոփված տվյալներ: Յուրաքանչյուր աղյուսակ պետք է ունենա համար և վերնագիր: Միևնույն նյութի ներկայացումը և՛ աղյուսակի, և՛ գծապատկերի տեսքով չի թույլատրվում:

4. Պատկերազարդ նյութերը (լուսանկար, նկար) ներկայացվում են նաև առանձին թվային տարբերակով` էլեկտրոնային կրիչի վրա: 9x12սմ չափի լուսանկարի որակը պետք է առնվազն 300dpi լինի: Ռենտգեն նկարի պատճենը ներկայացվում է պոզիտիվ պատկերմամբ: Անհրաժեշտության դեպքում նշումները կատարվում են երկրորդ օրինակի կամ ռենտգեն նկարին սոսնձված մոմաթղթի վրա (նշվում է նկարի համարը, հեղինակի ազգանունը և հոդվածի վերնագիրը, ինչպես նաև` նկարի վերևի և ներքևի կողմերը): Միկրոլուսանկարների վերադիրներում անհրաժեշտ է նշել գունավորման մեթոդը և մասշտաբը:

5. Հոդվածին կից ներկայացվում է «Ամփոփում» հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Տրվում է հեղինակի ազգանունն ու անվան և հայրանվան սկըզբնատառերը, հոդվածի անունը, ձեռնարկությունը, որի կլինիկական բազաների հիման վրա կատարվել է հետազոտությունը: Այնուհետև, հակիրճ ներկայացվում է հետազոտության նպատակ, հետազոտության մեթոդները (ներառյալ` վիճակագրական), հետազոտության արդյունքները, եզրակացությունը:

6. Գիտափործնական հոդվածներ տպագրության հանձնելիս հեղինակները պետք է նշեն օգտագործված կենդանիների տեսակը, քանակը, ցավազրկման և քնեցման համար օգտագործված մեթոդները:

7. Եթե հոդվածը վերադարձվում է հեղինակին վերամշակման, վերանայման կամ կրճատման համար, ապա հեղինակը նոր հոդվածի հետ միասին խմբագրություն է վերադարձնում նաև դրա սկզբնական տարբերակը: Սրբագրված հոդվածը հեղինակներին չի վերադարձվում:

8. Ձևակերպման կանոնների խախտման դեպքում հոդվածները չեն գրանցվում և չեն դիտարկվում:

9. Հոդվածներն ուղարկել հետևյալ հասցեով`
Երևան, Մարգարյան 6/2, «ՄԱՆԿԱԲԱՐՁՈՒԹՅՈՒՆ, ԳԻՆԵԿՈԼՈԳԻԱ ԵՎ ՆԵՈՆԱՏԱԼՈԳԻԱ» հանդեսի խմբագրություն,
հեռ. 34-18-83, 39-89-39
էլ-փոստ. ArmJObGN@yahoo.com: